

## Նախարարի տեղակալ Ա. Քարամյանի խոսքը

Հարգելի՛ գործընկերներ, հարգարժան՝ հյուրեր, սիրելի՛ երիտասարդներ

Ուրախ եմ ողջունելու ձեզ Երևանում՝ հայ-ռուսական երիտասարդական առաջին համաժողովի գումարման կապակցությամբ:

Կարծում եմ՝ հայ-ռուսական երիտասարդական այս և հաջորդ համաժողովները ոչ միայն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության երիտասարդական ոլորտի պետական մարմինների պատասխանատու աշխատողների, երիտասարդ առաջնորդների, հետազոտողների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների արդյունավետ համագործակցության կայուն հիմք կդառնան, այլև մեր երկրների գործընկերային և բարեկամական որակապես նոր հարաբերությունների սկիզբ:

Հայ և ռուս ժողովուրդներն արդեն մի քանի դար միասին են կերտում իրենց պատմությունը: Այդ պատմությունը հարուստ է համատեղ պայքարի, բարեկամության, փոխօգնության, մշակութային շփումների բազմաթիվ լուսավոր էջերով:

Յուրաքանչյուր կենսունակ և կենսասեր, լավագույն ապագայի հավատով ապրող ժողովուրդ, դասեր քաղելով անցյալից, փորձում է կառուցել ավելի բարեկեցիկ ու անվտանգ ապագա: Ուստի կարծում եմ, որ դուք, սիրելի՛ երիտասարդներ, զարգացնելով անցյալի ժառանգության լավագույնը, պետք է ձգտեք փոխադարձ ճանաչողության և հարգանքի, բարոյական և հոգևոր անանց արժեքների վրա խարսխված բարեկամական ու գործընկերային հարաբերություններ հաստատել:

Վստահ եմ, որ հայ-ռուսական երիտասարդական առաջին համաժողովը կծառայի այս և նախանշված մյուս նպատակներին:

Համաժողովի և՛ նպատակները, և՛ թեմատիկ ուղղությունները, որպես առարկայական, անհրաժեշտ և պիտանի արդյունքի ստեղծման կարևոր նախադրյալներ, ընտրվել են լրջագույն քննարկումների արդյունքում և ժամանակակից զանազան մարտահրավերների դիմագրավելու համատեղ ուղիներ գտնելու նպատակով:

21-րդ դարում խելահեղ արագությամբ փոփոխվող աշխարհում սկիզբ առան աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական, հասարակական, հոգևոր-մշակութային այնպիսի փոփոխություններ, որոնք պարբերաբար տնտեսական, ֆինանսական, նաև հոգևոր ճգնաժամերի պատճառ են դառնում: Եվ ահա, առկա և սպասվելիք ճգնաժամերը,

տնտեսական դժվարությունները, որոնք առնչվում են և՛ մեր երկրներին, և՛ մեզանից յուրաքանչյուրին, ստիպում են համատեղ որոնել ուղիներ ու ելքեր: Եվ ուրիշ ով, եթե ոչ երիտասարդությունը, որ բոլոր երկրներում էլ հասարակության առավել ակտիվ, ստեղծագործ, նորարար և լավ իմաստով հեղափոխական հատվածն է, պետք է և կարող է գտնել ոչ միայն այդ ուղիներն ու ելքերը, այլև բոլոր ոլորտներում մեր երկրների փոխշահավետ համագործակցության արդյունավետ մեխանիզմներ, մշակել և իրագործել հեռանկարային զարգացման ծրագրեր:

Գլոբալացման ընդհանրական միտումների մեր ժամանակներում, երբ այլակերպվում են շատ խնդիրներ, խեղաթյուրվում և աղճատվում են ավանդական ընտանեկան, բարոյական, քրիստոնեական, և ընդհանրապես համընդհանուր մարդկային արժեքներ, գերխնդիր է դառնում մեր ուժերի միավորումը հանուն մատաղ սերնդի, հանուն երիտասարդության, հանուն մեր ազգային և համամարդկային ճշմարիտ արժեքների պահպանման ու հարատևման, մեր երկրների զարգացման ու հզորացման:

Համաժողովը տեղի է ունենում հայ ժողովրդի կյանքում առանձնահատուկ նշանակություն ունեցող տարում: 2015 թվականը իր պատմական հայրենիքում Օսմանյան կայսրության կողմից բնաջնջված ավելի քան 1,5 միլիոն հայերի ոգեկոչման և հայ ժողովրդի հայրենագրկման 100-րդ տարելիցն է: Բայց այն միաժամանակ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար մեր պայքարի հզորացման տարին է, պայքար, որի նպատակը ոչ միայն պատմական իրողության արձանագրումն է, դրա հետևանքների վերացումը, մարդկային արժեքների վերահաստատումը, այլև նմանատիպ նոր ոճիրների կանխարգելումը:

Ե՛վ Մեծ եղեռնի տարիներին, և՛ հետագայում ռուս ժողովրդի շատ ազնիվ զավակներ, մտավորականներ, որպես մեր ժողովրդի ճշմարիտ բարեկամներ, կիսել են մեր ցավն ու ողբերգությունը. չէ որ, ինչպես ասվում է ժողովրդական ասացվածքում «Բարեկամին դժբախտության ժամանակ են ճանաչում»: 1995 թվականին Ռուսաստանը նաև պետական մակարդակով՝ Պետական դումայի որոշմամբ է ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Վստահ ենք, որ այս տարի ևս, երբ «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող» պետական հանձնաժողովը «Հիշում եմ և պահանջում եմ» խորագրով հիշատակի և ոգեկոչման բազմաթիվ միջոցառումներ է կազմակերպում, հատկապես ապրիլի 24-ին աշխարհի բազմաթիվ երկրներից ժամանողների հետ մեր կողքին կլինեն նաև մեր ռուս եղբայրներն ու քույրերը:

Համաժողովի օրերին Երևանում շրջելիս դուք շատ հայերի կրծքին կտեսնեք անմոռուկ ծաղկի տեսքով կրծքանշաններ: Այդ կրծքանշանը Հայոց ցեղասպանության

100-րդ տարելիցի խորհրդանշանն է: Բոլոր լեզուներով այս ծաղկի անվան ստուգաբանությունն արտահայտում է միևնույն իմաստը՝ «Հիշի՛ր»: Դա էլ հենց 100-ամյա տարելիցի հիմնական ուղերձն է:

Հիմա ես կխնդրեմ մեր աշխատակիցներին ձեզ բաժանել այդ անմոռուկներից և խնդրում եմ կրել դրանք՝ ի հիշատակ մեր նահատակների և ի համերաշխություն հայ ժողովրդի: Այս անմոռուկները նաև համամարդկային և մարդասիրական արժեքներին հավատարմության, դրանք պաշտպանելու պատրաստակամության խորհրդանիշներ են:

Ի հեճուկս իր ապրած բոլոր արհավիրքների՝ մենք՝ որպես քրիստոնյա ժողովուրդ, կարողացել ենք ոչ միայն վերածնվել և վերապրել, այլև արձանագրել բազմաթիվ հաղթանակներ՝ մշտապես առաջին շարքերում լինելով չարիքի դեմ պայքարողների կողքին: Այսպես, ցեղասպանությունից ընդամենը շուրջ քառորդ դար անց, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հերոսաբար ու անձնուրաց, ռուս ժողովրդի հետ ուս ուսի տված, պայքարել ենք անմարդկային մեկ այլ չարիքի՝ ֆաշիզմի դեմ: Հանուն խաղաղության և համամարդկային արժեքների հաղթանակի, ինչպես նաև հանուն մեր ազգի ու հայրենիքի հարատևման այդ պայքարին մասնակցել է շուրջ 500 հազար հայ: Նրանց կեսն իր կյանքն է զոհաբերել հաղթանակի համար:

Վստահ եմ, որ գալիք փորձությունները ևս կհաղթահարենք համատեղ ուժերով:

Այսօր, չնայած տասնամյակներ շարունակվող անօրինական շրջափակմանն ու «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» իրականությանը, Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կերտել իր պետությունը, ձգտում զարգացնել ու հզորացնել մեր երկիրը՝ համագործակցելով նաև այլ պետությունների հետ: Եվ այդ ամենում իր ուրույն դերակատարումն ունի մեր երկրի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնությունը:

Մեր երկրների համագործակցության որակը, արդյունավետությունն ու ապագան այսօր և այսուհետ մեծապես կախված է ձեզանից, սիրելի՛ երիտասարդներ:

Հուսով եմ, որ այս համաժողովը համակարգային և շարունակական համագործակցության երկարատև գործընթացի մեկնարկն է: Ուրախ եմ, որ այդ գործընթացը մեկնարկում է Հայաստանի Հանրապետությունում: Համոզված եմ, որ հայ-ռուսական երիտասարդական երկրորդ համաժողովը, որը ծրագրված է անցկացնել այս տարվա աշնանը Ռուսաստանի Դաշնությունում, կլինի այս համաժողովի օրգանական և տրամաբանական շարունակությունը:

Բարի երթ հայ-ռուսական երիտասարդական առաջին համաժողովին: